

Արկադի ԱԿՈՂՈՎ

## **ՏԱՅՐԸ ԽԴԱՐՈՒՄ (պատմական ակնարկ)**

Պատմական Հայաստանի Մեծ Հայրի քաջավորության 15 նահանգներից (աշխարհներ) տասնչորսերորդ՝ Տայրը, զբաղեցնում էր Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևմտյան հատվածը: Լեռնային և անտառապատ այս երկիրը հայտնի էր իր ամբողջամբ: Նա քաղաքական աննպաստ պայմաններում հաճախ էր դառնում հայ քաջավորների և իշխանների ապաստարանը:<sup>1</sup> Ըստ VII դ. «Աշխարհացոյշ»՝ Տայրը քաղկացած էր ուր զավաններից՝ Կող, Բերդացփոր, Պարտիզացփոր, Շակը, Բողոքա, Ոքաղի, Ազորդացփոր և Արայաց փոր:<sup>2</sup> Տայրի վերաբերյալ հնագույն տեղեկությունները վերաբերում են Ք.ա. XII դարին՝ դեպի Դայանին երկիրը (Տիգրիսի ակունքներից սկսած մինչև Ծորոխ գետի ավազանը ընկած տարածքը) ասորեստանցիների կատարած արշավանքների նկարագրություններում: Ուրարտական արձանագրություններում Տայրը հիշատակվում է Դիառլիի ձևով: Հոյն պատմիչ Գևտնովուն ի թիվս այլ ցեղերի հիշատակում է նաև տաղիներին: Արտաշես Ա-ի օրոր (Ք.ա. 189-մոտ 160 թթ.) Տայրը ընդգրկվեց հայկական միասնական քաջավորության կազմի մեջ, իսկ մ.թ. IV դ. որպես ժառանգական կալվածք տրվեց Մամիկոնյան նախարարական տոհմին: VII դ. վերջերին Տայրում Մամիկոնյաններին փոխարինում են Բագրատունիները: Աշոտ Սասկեր Բագրատունին Տայրում կառուցեց Կալմախ ամրոցը և այնտեղ տեղափոխվեց իր ոնտանիքը:<sup>3</sup>

Տայրի IX դ. պատմության վերաբերյալ մեզ հասած տեղեկություններ գրեթե չկան: Հայտնի է, որ Հր. առաջին կեսին այնտեղ առաջացել էր կյուրապաղասություն՝ (իշխանություն) վրաց Բագրատունիների Տայրի ճյուղի գլխավորությամբ: Վիրքի հետ կյուրապաղատությունը սահմանակցում էր Բանակ և Օլրի գնտերով, հարավից և հարավ-արևելքից սահմանակից էր Կայսիկների ամբրայությանը ու Այրարատի Վանանդ գավառին, իսկ հյուսիս-արևմտությից՝ Էլուզանդիային: Տայրի կյուրապաղատության առաջացման վերաբերյալ վրաց տարեգիր Սումբատ Դավիթիս-ձեն գրում է հետևյալը: «Աշոտը հաստատվեց այնտեղ (Արտանուջում-Ա.Ա.) և Տերը նրան հաղբանակներ ուղարկեց և դարձրեց նրան Չավշեր-Կլարջերի տիրակալը: Եվ Տերը և ամբացրեց նրա քաջավորությունը հունաց քաջավորի կամքով»:<sup>4</sup> Այստեղ պետք է ուշադրություն դարձնել երկու հաճամանքի վրա՝ ա) Տերը նրան հաղբանակներ ուղարկեց, թ հունաց քաջավորի կամքով: Հայտնի է, որ Տայրում Աշոտն ակտիվորեն պայքարում էր Արևելյան Վրաստանում իշխան արաբների դեմ և նրա օրոր է, որ բարձրանաւում է Արտանուջը, որը դատանում է նրա նատավայրը: Մի խորով, Տայրի կառավարիչը հասնում է նրան, որ բյուզանդական կայսեր կողմից ստացած նոմինալ իշխանությանը նաև տալիս է իրական բոլվանդակություն: <sup>5</sup> Եվ այնուամ հունաց քաջավորն Աշոտին շնորհեց կյուրապաղատի տիտղոսը:

Արդեն Խ. Տայքի հայ բնակչության մեջ սկսել էր գերակիշող քաղկեդոնականությունը։ Հայերի հարելք քաղկեդոնականության այս տարածաշրջանում լայն աջակցություն էր գտնում ինչպես բյուզանդացիների, այնպես էլ Վրացիների շրջանում։ Դրան համեստապես նպաստում էր Արտանուջի Քաջրատուների քաղկեդոնականացումը։ Ն.Մատթ նշում է, որ շնորհիվ հայ քաղկեդոնակաների ապագայնացման գործընթացի՝ Վրաստանը հարստացավ երկու շրջաններով՝ Տայքով և Կղաքօքով։<sup>6</sup> Տայքի հայկական շրջանները մեծամասամբ շարունակում էին պահպանել իրենց հայկական

<sup>1</sup> Թ. Հակոբյան, «Հայաստանի պատմական աշխարհագրություն», Եր., 1968, էջ 260:

<sup>2</sup> U. Երեմյան, «Հայաստանը ըստ «Աշխարհացոյշի», Եր., 1963, էջ 110:

<sup>3</sup> Հայ ժողովրդի պատմոթյուն (այսուհետև՝ ՀԺՊ), ՀՍՍՌ ԳԱ հրատ., հ. 3,Եր., 1976, էջ 108:

<sup>4</sup> Сумбат Да витис-дзе, История и повествование о Багратионах, перевод, введение и примечание М. Лордкипанидзе, Тб., 1979, стр. 31.

<sup>5</sup> Летопись Картли, перевод, введение и примечание Г. Цулая, Тб., 1982, стр. 48.

<sup>6</sup> Н. Марр, Аркаун, монгольское название христиан святыни с вопросом об армянах-халкедонитах, Византийский Временник, XII, СПб., 1905, стр. 6.

անունները, ինչպես օրինակ Իշխանը, Շատրերդը և այլն:<sup>7</sup> Խդ. Տայքի վրացի հոգևորականությունը շրջապատված էր քեզ հավատակից, բայց լայնապես՝ հայ ազգարնակչությամբ: Երկիրը վրացական անվանելը նրանք իմանակիրում էին այն բանով, որ եկեղեցիներում ժամասացությունը տեղի էր ունենում վրաց լեզվով:<sup>8</sup> Խլ. փորձ արվեց երկրամասը վերադարձնել հայկական եկեղեցու հովանուներոն, սակայն Մարմաշենի վանքի վանահայր Սոստենեսը հաջողություն չունեցավ:<sup>9</sup>

Ինչևէ, Խդ. հայոց և վրաց բազավորների ու Տայքի կյուրապաղատության միջև հաստատվել էին լավ հարաբերություններ և սերտ համագործակցություն:<sup>10</sup> Տայքը կարևոր նշանակություն է ստանում Բյուզանդիայի և Հարավային Կովկասի երկրների համար ինչպես իր դիրքի, այնպես էլ տեղական բավականաչափ գորեղ իշխանության առկայության շնորհիվ, որն իր հզորության զագարնակետին հասավ Դավիթ Կյուրապաղատի օրոք (960-ականներ-1000թթ.): Դավիթ Կյուրապաղատը շատ բարձր գնահատականի է արժանացել ինչպես հայ պատմիչների՝ Ասորիկի, Արիստակս Լաստիվերտցու, Մատրենու ՈՒռհայեցու, այնպես էլ վրաց տարեգիրների կողմից: Լաստիվերտցին նրան անվանում է հզոր, աշխարհաշեն, առատածեռն ու աղքատասեր մարդ, իսկապես խաղաղություն սահմանող,<sup>11</sup> ՈՒռհայեցին՝ Աստծոն սուրբ մարդ և ասովածասեր,<sup>12</sup> վրացի տարեգիրը՝ գրասիրու, խաղաղասեր, անիշաշար, վանականների հովանավոր, եկեղեցիներ իմանող, մարդասեր:<sup>13</sup> Հենց Դավիթ Կյուրապաղատն է, ըստ վրացի տարեգրի, եղել միասնական վրացական բազմավորության ստեղծման ջատագովներից մեկը, չնայած վրաց պատմագրության մեջ զոյտքյուն ունի մեկ այլ տեսակետ, համաձայն որի՝ Տայքի դերը միասնական վրացական պետության ստեղծման գործում տարեգիրների նույն գերազանահատված է:<sup>14</sup>

975թ. Վիրքի Էրիստավ (ազգագործ) Իվանե Մարտիխս-Ճեն, որին սկսել էին ներկա Կախեթի իշխանները, իր դեսպանին ուղարկում է Դավիթ Կյուրապաղատի մոտ, առաջարկում իր զորքով զալ և վերցնել Վիրքը, որպեսզի կամ ինքը տիրի այնտեղ, կամ էլ այն զիջի Բագրատին՝ Տայքի հյուսիսային մասի կառավարիչ Գուրգենի և Արիստաց Գեղրդ բազավորի դատեր՝ Գուրանդրիխտի որդուն:<sup>15</sup> Դա նախադրյալ էր ստեղծում Վրաստանի հետագա միավորման համար, և փաստուն Տայքի և Վիրքի միավորումը դառնում էր այդ գործընթացի սկզբնական փուլը: Իվանե Մարտիխս-Ճենի առաջարկության համաձայն՝ Դավիթը տիրացավ ՈՒռհայեցիներն՝ Վիրքի կենտրոնին, քանի որ անժառանգ էր, որդեգործ Բագրատին, այնուհետև իր մոտ կանչեց Վիրքի ազատներին, որոնց պարտադրեց Ենթարկվել Բագրատին՝ իրու «Տայքի, Քարթլիի և Արիստակայի ժառանգորդի»:<sup>16</sup> Այս իրադարձություններն ընկան միասնական վրացական պետության ստեղծման արդի հայեցակարգի իմքում, որի հեղինակն է Ի. Զավախշվիլին:<sup>17</sup>

970-ական թթ. Վերջին ծանրացավ Բյուզանդական կայսրության վիճակը: Վասիլ (Քարտլի) Բ-ի (976-1025թթ.) կառավարման սկզբին նրա դեմ հուժկու ապստամբությունը բռնկվեց Վարդ Ակլերուի՝ փոքրասիական ազնվականության հզորագույն ներկայացուցիչներից մեկի գլխավորությամբ: Ակլերոսն իր կողմը թերեց կայսրության զինված ուժերի մեծ մասը, ինչպես նաև՝ զրեք ամբողջ Փոքր Ասրան: Ապստամբությու-

<sup>7</sup> H. M a p p, Նշվ. աշխ., էջ 22:

<sup>8</sup> H. M a p p, Գեորգի Մերցու, Ժитие Григория Хандзтийского, СПб., 1911, стр. 123.

<sup>9</sup> Միտրոպոլիտ Ա. Զափարիձե, Վրաստանի եկեղեցական ժողովները (վրացերեն), Թթ., 2003, էջ 98-108:

<sup>10</sup> ՀՃՊ, հ.3, էջ 108:

<sup>11</sup> Պատմությին Արիստականայ Վարդապետի Լաստիվերտցոյ, Թիֆլիս, 1912, էջ 3:

<sup>12</sup> Մատթօս ՈՒռհայ և յեցի, ժամանակագրութիւն, Վարդապատա, 1898, էջ 36:

<sup>13</sup> Լետուս Կարտլի, стр. 57.

<sup>14</sup> Գ. Մելիք իշխան Ֆեռդատի Վարդապատա Վրաստանի քաղաքական միավորումը և Վրաստանում ֆեռդատական հարաբերությունների զարգացման մի քանի հարցեր (վրացերեն), Թթ., 1973, էջ 12:

<sup>15</sup> Լետուս Կարտլի, стр. 57.

<sup>16</sup> Քարթլիս ցիսլիքերա (վրացերեն), հ. 1, Թթ., 1955, էջ 274:

<sup>17</sup> Ի. Զավախշվիլի վարչության վրացական պատմություն (վրացերեն), հ. 2, Թթ., 1965, էջ 123-124:

նը ճնշելու համար կայսերական իշխանությունն օգտագործում է իր բոլոր միջոցները: Կայսրության ծանր վիճակից փորձեցին օգտվել արար ամիրաները: Մրկանյանների Բատ ամիրան գրավեց Մանազկերտը: Այս վճռական պահին Վասիլ Բ-ն դիմեց Տայքի տիրակալին՝ խնդրելով Դավիթից օգնական զորք տալ կայսերական արևելյան բանակին, որպես հասուցում խոստանալով ցլյան հանձնել նրան նոր հողային տիրույթներ՝ Խաղոս առիծը, Կղեսուքը, Չորմայրը, Կարինը, Բասենը, Մարդարի գավառը (կամ Սլուկ բերդը), Հարքն ու Ապահովները:<sup>18</sup> Դավիթն ընդունեց առաջարկը և 979թ.-ին իշխանաց իշխան Չոջիկի ու Թոռնիկե էրիստավի գլխավորությամբ կայսերական բանակ ուղարկեց 12 հազարանց մի զորանաս: <sup>19</sup> Այս զորանասն աջի ընկավ Հայիս գետի ափին Սարավենե դաշտում տեղի ունեցած ճակատամարտում, որտեղ Ակլերու սի բանակը պարսություն կրեց:<sup>20</sup> Ամենայն հավանականությամբ Դավիթն ինքն էր օգնության դիմաց պահանջել վերը նշված գավառները, իսկ կայսրն ընդունել էր այդ պայմանը: Ներ վիճակում գտնվող Վասիլ Բ-ն դիմանագիտական նորք քայլ էր դիմել: Դավիթն փաստորեն ցլյան տրվել էին Կարինը, ինչպես նաև այլ հողեր, որոնք այդ խառը տարիներին Բյուզանդիան ի վիճակի չեր պաշտպանելու կամ նույնիսկ դեռ չեր էլ նվաճել (Հարք, Ապահովներ): Դա նշանակում էր, որ ոչ հետու ապագայում այդ հողերը Բյուզանդական կայսրությունը հետ կտանար: Դավիթը ևս ուներ իր սեփական նախատակները, օգնելով Վասիլի՝ նա կարող էր ընդարձակել իր տիրույթները:<sup>21</sup>

Ակլերոսի խոռվությունը ճնշվեց, որից հետո Դավիթը ստացավ խոստացված տիրույթները, բացի Հարք-Ապահովներից: Միայն 990թ.-ին «կիրապարատն Հայոց Դաւիթ պաշարեալ զՄանազկերտ քաղաք»,<sup>22</sup> գրավեց այն՝ այնտեղ վերաբնակեցնելով վրացիների և հայերի:

Հականարս ուժերի պայքարը Բյուզանդիայում նոր թափով վերսկավեց 980-ական թթ.: Դավիթն այս անգամ միացավ կայսեր դեմ ապատաճրած Վարդ Փոկասին՝ փոքրաշխական ազնվականության մեկ այլ ներկայացուցիչ: Դավիթի կողմից Փոկասին օգնելով պայմանավորված էր նրանով, որ երկար ժամանակ նրա հետ լավ հարաբերությունների մեջ էր եղել՝ սկսած այն ժամանակից, երբ Փոկասը «Խաղոխի» (Խաղոտիք) դրվագն էր:<sup>23</sup> Այդ ընթացքում վատացան նաև Դավիթի և Բագրատ Գ-ի (975-1014թ.) հարաբերությունները: Ըստ վրացի տարեգրի՝ դրա պատճառը Վիրքի էրիստավներից մեկի՝ Ռատիկի շինազանդվելն էր Բագրատին: Բագրատն իր ուժերով մտնում է Վիրք՝ նպատակ ունենալով գերել Ռատիկին: Վերջինս շտապում է Բագրատի քայլերի մասին տեղեկացնել Դավիթ Կյուրապարատին՝ իր կողմից ավելացնելով, որ Բագրատ Գ-ի իրական նպատակը Դավիթին վերացնելն է:<sup>24</sup> 988թ.-ին գործը հասավ բացահայտ ընդհարման: Այդ ժամանակ Կյուրապարատի գործերը մասնակցում էին Փոկասի ապստամբությանը, ուստի և դրամից փորձես օգուտ քաղել Բագրատը: Դավիթը օգնություն խնդրեց հայոց Սմբատ թագավորից և «հայոց բոլոր թագավորներից»՝ Կարսի, Վասպուրականի, Սյունյաց թագավորներից և Աղվանից իշխանից:<sup>25</sup> Այս մեծ գործին Դավիթ Կյուրապարատին իր ուժերով միացավ Զավախիք Դիլիկե գյուղում: Դավիթ և Բագրատ Գ-ի հոր՝ Գորգենի գործերն իրար հանդիպեցին Գարդարիսրիի<sup>26</sup> կոչվող վայրում (Տայքի և Ըլշատի սահմանագլխին): Գորգենի գործերը պարտվեցին: Գործերի նման ընթացքն ստիպեց Բագրատ Գ-ին տեղի տալ: Տայքի տիրակալը հաշտվեց նրա հետ, սակայն ստիպեց Բագրատին հօգուտ հայոց Սմբատ Բ-ի զիջել Սակուրեթ ամրոցը: Այս արշավանքի շնորհիվ Անիի Բագրատունիներն ամրապնդվում են Զավախ-

<sup>18</sup> ՀԺՊ, հ.3, էջ 108:

<sup>19</sup> Վ. Գ ու Հ ու ա, Ը Ե ս և Խ ի ա, Վրաստաճի պատմություն 7-10, Թթ., 1986, էջ 50:

<sup>20</sup> ՀԺՊ, հ.3, էջ 109:

<sup>21</sup> Նոյնը:

<sup>22</sup> Ստ ե փ ա ն ո ս Տ ա ր ո ն ե ց ի Ա ս ո դ ի կ, Պատմութիւն Տիեզերական, Եթ., 1987, էջ 470:

<sup>23</sup> Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 10, Բյուզանդական աղբյուրներ, Գ, Հովհաննես Սլովիցես (թարգմանությունը բնագրից, առաջարանը և ծանոթագրությունները Հ. Բարդիլյանի), Եթ., 1979, էջ 64:

<sup>24</sup> Լետուսի Կարլոս, ստուգ. 59.

<sup>25</sup> Նոյնը:

<sup>26</sup> Նոյնը:

ըում:<sup>27</sup> Չնայած միջադեպը կարգավորվեց, սակայն ամենայն հավանականությամբ հենց այդ քայլը պատճառ դարձավ, որ Դավիթը հրաժարվի Բագրատի օգտին կատարած կտուկից:

Վասիլ Բ-ին հաջողվեց պարտության մատնել Փոկասին: Դա Դավիթ Կյուրապաղատին դժվարին կացության մեջ օցեց: Դավիթը ստիպված ներունվ դիմեց Վասիլ Բ-ին՝ խոստանալով հայտակություն և հճազանդություն: Նա ստիպված էր նաև երաժարվել ոչ միայն պարզևական հողերից, այլև Տայքը և իր մնացած տիրությունը կտակել Բյուզանդիային: Դրանով կայսրությունը դարձավ Տայքի ժառանգորդը, իսկ Դավիթը՝ Տայքի Վերջին կյուրապաղատը:<sup>28</sup>

997թ.-ի ձմռանը Դավիթը զորք ուղարկեց պաշտպան Խոլաբը, սակայն պարտություն կրեց, որից օգտվեցին արար ամիրաները և փորձեցին վերադարձնել Մըմբանյաններից խած շրջանները, առաջին հերքին՝ Ապահովնիքը: Այս հարձակումը զիսավորած Ասորպատականի ամիրա Մամլանը 998թ.-ին պարտություն կրեց Տայքի, հայոց և Վրաց միազ լայ ուժեղություն կողմնից:<sup>29</sup>

Հայոց Աստղիկի, Դավիթ Կյուրապաղատը մահացել է հայոց 449թ. Զատկին՝ 1000թ.-ի մարտի 31-ին: Ըստ Լաստիվնետցու և Ուժիայեցու, վրաց Բարձրին արքեախւկոպոսը,<sup>30</sup> մահաբույն խառնելով պատարագի հաղորդությանը, խնեցրեց Դավիթ Կյուրապաղատին ու խեղդաման արեց նրան Ավագ իննօքարքի օրը:<sup>31</sup> Մենք ևս հակված ենք կարծելու, որ Դավիթ Կյուրապաղատը մահացել է 1000թ.-ի մարտի 28-ին: Բարձրին արքեախւկոպոսն իր հերթին պատժվեց Վասիլ Բ-ի կողմնից. «Վասնի հայր անոն էր Դավիթ կիւրապաղատ թագաւորին Վասիկն. և Վասն այնորիկ կորուս զնոսա»:<sup>32</sup>

Դաստիք կուրավագալաւ բազմութեա նաև ա գալու այլուր գալու յ գալու»:  
Դավիթ Կյուրապաղատի մահից հետո Վասիլ Բ-ն շտապ եկալ Հայաստան, շրջազայեց նոր տիրույթներով՝ այցելելով Հարք, Ապահովիք, ապա՝ Տայք, տիրացավ բազմաթիվ զավառների, բերդերի և քաղաքների: Եկեղյաց զավառում նրան դիմավորեցին Տայքի զավառները, ներկայացան նաև Բագրատ Գ-ն և նրա հայր Գորգենը, որոնք մեծարքեցին Կյուրապաղատ և մազիստրոս տիրողութերով: Տայքի մի մասը որպես հողային պարզ ցլյան տրվեց Բագրատ Գ-ին: Տայքում Վասիլը նոր վարչական համակարգ ստեղծեց, տեղերում նշանակվեցին աստիճանավորներ ու դատավորներ: Նախկին իշխանությունը վերափոխվեց բանակարեմի:<sup>33</sup>

Այսպիսով, կյուրապաղատության անկումնվ բարդացավ հյա և վրաց քաջավորությունների վիճակը, քանի որ նորաստեղծ քանակաթեմք դարձավ նրանց վրա հարձակվելու հետակեն:

## ТАЙК В 10-ОМ ВЕКЕ

## *Резюме*

A. Акопов

В первой половине X века в Тайке возникла кирапалатство во главе грузинских Багратидов. Кирапалат Ашот добивается того, что данную ему византийским императором номинальную власть он наполняет реальным содержанием. Тайкское кирапалатство достигла вершины своего могущества во время правления Давида Кирапалата (960-ые-1000гг.). Но с одной стороны противостояние между Давидом и первым королем объединенной Грузии Багратом З-им, с другой стороны политика византийского императора Василия 2-ого привели к тому, что в 1000-ом г. Тайк отошел Византии, согласно завещанию Давида Кирапалата.

<sup>27</sup> Ա. Մելքոնյան, Զավախսոր XIXդ. և XXդ. 1-ին քառորդին, Եր., 2003, էջ 50:

<sup>28</sup> ΛΩΝ, h.3, λγ 110:

<sup>29</sup> Անյաս սեղում, էջ 111:

<sup>30</sup> *Uwunp̄t̄o u ññnhw̄j̄tḡh̄, a2q̄. w2ju., t̄q̄ 38:*

<sup>31</sup> Պատմոթիւն Արխտակեսայ Վարդապետի Լաստիվերցւոյ, էջ 3:

<sup>32</sup> *Uw up t̄k o u l̄t̄n h w J t̄g h, 62q. w2hu., t̄q 38:*

<sup>33</sup> ΛΔΩ, h.3, l.9 111: